ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1962 Общественные науки

Ս. Դ. Ալախվերդյան

ԿԱԹՈԼԻՑԻԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԱՅԻ «ՀՈՒՄԱՆԻԶՄԸ»

Կապիտալիստական էկոնոմիկայի անկայունությունը, սառը պատերազմի մթնոլորտը և ատոմային տրագեդիայի վտանգը, այս բոլորը ստեղծում են այժմ այն ահաբեկող իրադրությունը, որում մարդը ապրում է ժամանակակից Արևմուտքի աշխարհում։ Այսպիսի պայմաններում առանձնակի հետաքրքրություն է հանդես բերվում հումանիստական պրոբլեմների և բոլոր այն հարցերի նկատմամբ, որոնք կապված են մարդու ճակատագրի և մարդկային երջանկությանը հասցնող ուղիների հետ։ Հակադիր սոցիալական սիստեմների իդեոլոգիական սուր պայքարի պայմաններում սոցիալիզմի թշնամիները ջանում են մատերիալիզմի և սոցիալիզմի գաղափարները հակադրել «իսկական հումանիզմին»։

Հումանիզմի պրոբլեմների նկատմամբ մեծ ուշադրություն է դարձվում կրոնական տարբեր հոսանքների կողմից, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ժամանակակից կաթոլիցիզմը։ Վերջինս իրեն է վերագրում «իսկական և համապարփակ» քրիստոնեական հումանիզմը կրողի դերը։ Օժտված լինելով լայն հնարավորություններով՝ անմիջականորեն ազդելու հավատացյալ մասսաների վրա, կաթոլիկական սոցիալական դոկտրինան բարենպաստ պայմաններ ունի իր գաղափարների տարածման համար, որը լուրջ վտանգ է հանդիսանում ժողովրդական մասսաների դասակարգային ինքնագիտակցության ձևավորման ճանապարհին։ Հումանիզմի աստվածաբանական կոնցեպցիաները հիմնված են մարդկային անձի էության վերացական հասկացողության վրա։ Հակառակ մարդկային էության մարքսիստական բացատրությանը, ըստ որի մարդը իր դարաշրջանի հասարակական հարաբերությունների համակեցության արդյունքն է, իդեալիզմը անձը գնահատում է կյանքի նյութական պայմաններից դուրս։ Առավել հեղինակավոր նեոթոմիստ Ժակ Մարիտենի կարծիքով, անձի հիմքը «անմահ հոգին» է, որը ձգտում է դեպի աստվածը։

Կաթոլիկ աստվածաբանների դիտականանման գրվածքները վերջին հաշվով հանգում են անձի՝ որպես «աստծո պատկերի» կրոնական հասկացությանը։ Բացահայտ անհեթեթությունից խուսափելու համար, Վատիկանի տեսաբանները չեն կարող չընդունել, որ մարդը հասարակության մասնիկն է, բայց նրանց հասկացողությամբ հասարակությունը ինքնըստինքյան չի կարող լինել հոգևոր արժեքների աղբյուր։ Նա միայն միջոց է վերջիններիս հանգեց գալու համար, իսկ անհատը «ինքնարավ և անկախ ատոմ» է կոլեկտիվի ներսում։ Այլ կերպ ասած, հռչակվում է վերացականորեն հասկացված անհատի առաջնությունը հասարակության նկատմամբ։ Ընդ որում, անհատը և հասարակությունը հակադրվում են միմյանց։ Պատմական մատերիալիզմը մարդուն դիտում է որպես հասարակական, պատմականորեն կոնկրետ էակ, որն իր մեջ մարմնավորում է հասարակության և պետության

մեջ գոյություն ունեցող հարաբերությունները։ Դասակարգերի առկայության պայմաններում խոսք կարող է լինել միայն կոնկրետ պատմական դասակարգին պատկանող անհատների մասին, քանի որ դասակարգային հասարակությունում այս կամ այն դասակարգին պատկանելը որոշում է տվյալ անհատի դիրքը, անձնական ճակատագիրը և նրա աշխարհայացքը։ Այս իսկ պատճառով չի կարելի խոսել հասարակության հանդեպ ունեցած անհատի հարաբերության մասին «ընդհանրապես», այլ անհրաժեշտ է տարբերել շահագործող հասարակությունում ճնշվող դասակարգի անհատներին տիրող դասակարգի անհատներից։ Բոլոր դատողությունները «անհատի մասին ընդհանրապես» և «մարդկային բնույթի մասին ընդհանրապես» չեն կարող դուրս գալ այն բացարձակ ճշմարտությունների սահմաններից, որ բոլոր մարդիկ ունեն ընդհանուր անատոմիական կառուցվածք և դատում են նույն ձևական տրամաբանության օրենքների համաձայն։ Այդ կատեգորիաների հիման վրա անհատի և հասարակության վերաբերյալ որևէ այլ եզրակացության հանգելու յուրաքանչյուր փորձ եղել է և մնում է հակագիտական։ Հենց այդպիսին են քրիստոնեական հումանիզմի ժամանակակից քարոզողների տեսությունները, որոնք աղավաղված, աղճատված են պատկերում հասարակության դերը անհատի ձևավորման գործում, անհատի և հասարակության միջև գոյություն ունեցող ներքին օրգանական կապերը։ Ողջ կաթոլիկական սոցիոլոգիայի բնորոշ առանձնահատկությունը հանդիսանում է կատաղի հակակոմունիզմը, բացարձակ ատելությունը կոմունիստական շինարարության տեսության և պրակտիկայի հանդեպ։ Ընդ որում, Սովետական Միության և նրա գաղափարախոսության նկատմամբ եղած հերյուրանքների ամենասիրված թեման հումանիզմի պրոբլեմներն են։ Կաթոլիցիզմի պաշտոնական դոկտրինան, նեոթոմիզմը մեղադրում է կոմունիստներին՝ մարդուն հասարակության և պետության կողմից «շահագործելու» համար։ Այս մասին շատ է խոսվել Հռոմի Թովմա Ակվինացու ակադեմիայի հատուկ սեսիայում, որը նվիրված էր կոմունիզմի դեմ մղվող պայքարին և որի նյութերը 1952 թվականին հրատարակվել են Նյու-Յորքում՝ «Կոմունիզմի փիլիսոփայությունը» ժողովածուում։ Ինչպես հայտարարել է զեկուցողներից մեկը, «սուրբ հայր» Ուգո Վիլլինոն կոլեկտիվ սեփականությունը կապում է մարդուն քաղաքական իշխանության հետ, «պետության հետ», ճնշում է վերջինիս բնական ձգտումները՝ ստանալու բարիքներ։ Միայն մասնավոր սեփականությունն է, հաստատում է կաթոլիցիզմը, որ կարող է ապահովել անհատի անկախությունը պետությունից՝ երկրային բարիքներից օգտվելու գործում։ «Այն պահին, երբ մարդու մեջ արթնանում է ոգին և դրա հետ մեկտեղ իր անհատականության գիտակցությունը,— շարունակում է Ու. Վիլլինոն,— նրա մեջ ծագում է սեփականությանը տիրելու ուժեղ ցանկություն»[1]։ Նա պնդում է, թե մասնավոր սեփականությունը իրենից ներկայացնում է մեծագույն արժեքների զարգացման անփոխարինելի միջոցը, որի կրողը համարվում է անհատը։ «Քրիստոնեական սոցիալիզմի» ոգուն համապատասխան մասնավոր սեփականությունը հռչակվում է որպես մարդու հավերժ և բնական իրավունք՝ անհատի ազատ զարգացման համար։ Ընդ որում, հայտարարվում է, թե բոլոր նյութական հարստությունների տերը հանդիսանում է աստվածը, իսկ կապիտալիստները միայն տնօրինում են աստծու կողմից իրենց

[1] „The philosophy of Communism", New York, 1952, p. 18.

պարգևված հարստությունը և կրում են իրենց վրա ծանր պարտականություններ և պատասխանատվություն՝ հասարակության և աստծու առջև։ Այսպիսով, այնտեղ, որտեղ գործը վերաբերում է բուրժուազիայի մերկ շահերին, «քրիստոնեական հումանիզմը» իր համար որոշակի «նյութական» բազա է ստեղծում, և դրա քարոզողները մոռանում են իրենց «գերագույն» ձգտումների մասին, մասնավոր սեփականությունը հայտարարելով հումանիզմի անհրաժեշտ պայման։ Բայց հենց մասնավոր սեփականությունն է հանդիսանում այն սկզբունապատճառը, որը շահագործող հասարակության մեջ մարդուն ապահումանիզացիայի է ենթարկում։ Դասակարգային ամբողջ պատմության ընթացքում մասնավոր սեփականությունը ծառայել է որպես հիմք, բայց ոչ թե հումանիզմի, այլ մարդու կողմից մարդու շահագործման համար։ Կապիտալիզմի ժամանակ մասնավոր սեփականությունը հասնում է իր բարձրագույն ավարտված ձևին, նույնիսկ առաջին և հիմնական մարդկային հատկությունը՝ աշխատանքը դառնում է, ինչպես այդ պարզ կերպով ցույց է տվել Մարքսը, մարդուն հակադրվող ուժ, դառնում է նրա ֆիզիկական գոյության միջոց և դադարում է աշխատանքի նկատմամբ մարդու ունեցած իսկական պահանջմունքները բավարարելուց։ Այդպես է տեղի ունենում անհատի այլանդակումը և մարդկային հարաբերությունների խեղաթյուրումը կապիտալիստական հասարակությունում։

«Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» աշխատության մեջ Էնգելսը գրում է. «...Իր մարդկային բնույթն արտահայտելու համար բանվորին մի այլ ասպարեզ չէր մնում, քան այն բողոքը, որ նա բարձրացնում էր իր վիճակի առթիվ, հետևապես միանգամայն բնական է, որ հենց այս բողոքի մեջ պիտի արտահայտվեն բանվորների ամենահամակրելի, ամենաազնիվ և ամենամեծ չափով մարդկային բնույթ կրող հատկանիշները»[2]։

Պրոլետարիատի օբյեկտիվ դասակարգային դրությունը, նրա կյանքի և աշխատանքի պայմանները ծնում են նրա մեջ իսկական մարդկային համերաշխության, փոխադարձ օգնության, անշահախնդիր ընկերակցության գծեր։ Փշրելով պրոլետարիատի շղթաները, պրոլետարական ռևոլյուցիան միևնույն ժամանակ ազատագրում է հասարակությանը ամբողջությամբ, բացելով իսկական հումանիստական հարաբերությունների ճանապարհը։ «Մասնավոր սեփականության վերացումը նշանակում է մարդկային բոլոր զգացմունքների և հատկությունների լրիվ ազատագրում»[3],— գրում է Մարքսը։

* *

Քրիստոնեական տեսաբանների «աշխատություններում» կարևոր տեղ է դրավում անձի ազատության պրոբլեմը։ Արհամարհելով անցյալի պատմա-փիլիսոփայության ժառանգության փաստերը, նրանք ձգտում են անհիմն կերպով քրիստոնեությանը վերագրել այդ հարցադրման նախապատվությունը։ Ընդհանրապես ազատության հասկացությունը այն հարցն է, որի կապակցությամբ ամենից շատ հերյուրանք է թափվում ինչպես մարքսիզմ-լենինիզմի տեսության, այնպես էլ ՍՍՌՄ-ում և նոր դեմոկրատիայի երկրներում կոմու-

[2] Ֆ. Էնգելս, Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում, Հայպետհրատ, 19, էջ 334։

[3] К. Маркс, Экономическо философские рукописи, 1844, К. Маркс, Ф. Энгельс, Из ранних произведений, М., 1956, стр. 592.

նիստական շինարարության պրակտիկայի հասցեին։ Մարքսիզմը մեղադրվում է ֆատալիզմի, ամեն տեսակի ազատության սկզբունքային ժխտման մեջ, իսկ անձի ազատության ճնշումը հայտարարվում է ընդհանրապես մատերիալիզմի նպատակը։

Ինչպես հայտնի է, մարքսիստները ազատությունը համարում են հասարակության և բնության օբյեկտիվ օրենքների ճանաչումը և պրակտիկ կիրառումը։

«Ազատությունը ոչ թե երևակայական անկախություն է բնական օրենքներից, այլ այդ օրենքների իմացությունն է և դրա շնորհիվ ստացվող հնարավորությունը այդ օրենքները պլանաչափ ձևով ծառայեցնելու որոշ նպատակների համար»,— գրել է Էնգելսը[4]։

Հասարակական կյանքում անհրաժեշտությունը կոնկրետ կերպով արտահայտվում է նրանում, որ յուրաքանչյուր սերունդ սահմանափակված է այն պայմաններով, արտադրողական ուժերի և հասարակական կառուցվածքի գոյություն ունեցող այն ձևերով, որոնք ինքն է գտնում, այսինքն այն գործոններով, որոնք պայմանավորված են հասարակական զարգացման որոշակի օրենքներով։

Հաշվի չառնելով օբյեկտիվ անհրաժեշտ գործոնները, մարդը կարող է դառնալ միայն խաղալիք, անզոր մի էակ բնության և հասարակության օբյեկտիվ օրենքների առջև։ Եվ միայն հակառակ պարագայում, երբ նա, Էնգելսի արտահայտությամբ, «ընդունում է որոշ գործի իմացությամբ», կարելի է խոսել մարդու ազատ կամքի մասին։

Սակայն ազատ գործելու համար միայն իմացությունը դեռևս բավական չէ։ Անհրաժեշտ է, որպեսզի հասարակության քաղաքական և տնտեսական կառուցվածքը թույլ տա իրականացնելու տվյալ գործունեությունը։ Այլ կերպ ասած, որպեսզի այդ գործունեության համար հասունացած լինեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ, որի ժամանակ այդ գործունեությունը կարող է համապատասխանել հասարակության հասունացած պահանջներին։

Կապիտալիստական հասարակության օրենքների ճանաչումը դեռևս հնարավորություն չի տալիս առանց կապիտալիզմի շրջանակներից դուրս գալու գիտակցական վերահսկողության ենթարկելու նրա արտադրական հարաբերությունները։ Բայց այդպիսի ճանաչողությունը բերում է տվյալ հասարակարգի կործանման և սոցիալիզմի ստեղծման անհրաժեշտության ըմբռնմանը, սոցիալիզմ, որը թույլ կտա մարդկանց գիտակցորեն կառուցելու և կարգավորելու իրենց հարաբերությունները։

Ժամանակակից եկեղեցականները այդ հարցում շարունակում են ինդետերմինիզմի գիծը, որից կառչած էին նաև հին կաթոլիկ աստվածաբանները, ըստ էության ոչ մի նոր բան չմտցնելով պրոբլեմի լուծման մեջ։ Նեոթոմիզմը ազատության համար անհաղթահարելի խոչընդոտ է տեսնում դիալեկտիկայի մեջ։

Ազատությունն ու անհրաժեշտությունը մետաֆիզիկորեն անջատելով միմյանցից, կաթոլիցիզմի դաղափարախոսները գտնում են, որ նրանց որպես երկու հակադիր բևեռների և դրա հետ մեկտեղ մի ամբողջության մա-

4 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Հայպետհրատ, 1940, էջ 156։

սին եղած պատկերացումը լոկ մարքսիզմի ներքին հակասությունների վկայությունն է։

«Կոմունիզմի փիլիսոփայությունը» ժողովածուում Պ. Պավանը մեղադրում է մարքսիզմին այն բանում, որ ազատությունը հասկացվում է որպես «իրականության ներքին զարգացում», որը իրագործվում է մարդկային գիտակցությունից անկախ։ Ինչպես երևում է, Պավանը միակողմանիորեն է պատկերացնում ազատության մասին մեր հասկացողությունը, քանի որ, ինչպես ասվեց, ազատությունը նշանակում է իրականության զարգացման ներքին օրենքների իմացումը և դրանց հիման վրա կատարվող պրակտիկ գործունեությունը։

Մարքսիզմին ավելի «տեղյակ» ճիզվիտ Գուստավ Վետտերը իր հերթին պնդում է, որ ազատության այդպիսի հասկացողությունը նշանակում է անհատի ազատության ժխտում և նրա հանձնումը «ունիվերսալ դետերմինիզմի ողորմածությանը»։ «Մուրը հայրերի» կարծիքով, իսկական ազատ «ես»-ի ֆունկցիան կայանում է նրանում, որ նա ընկալում է ինքն իրեն, պահպանում է իր կեցության անկախությունը և ամեն կերպ պաշտպանում է իրեն արտաքին աշխարհի ազդեցություններից։ Այսպիսով, կաթոլիցիզմի սոցիալական դոկտրինան քարոզողները ազատության և անհրաժեշտության ամբողջ պրոբլեմը փոխադրում են անհատի սուբյեկտիվ գիտակցության ոլորտների վրա և այն վոլյունտարիստորեն անջատում բնության և հասարակության օբյեկտիվ և անհրաժեշտ պրոցեսներից։ Ինչ վերաբերում է անհրաժեշտությանը, ապա նրա գիտական բմբռնումը ընդհանրապես ժխտվում է։ Այսպես, Ժ. Մարիտենը հայտարարում է, թե ատոմների շարժումը կառավարվում է հրեշտակների կամքով, այլ ոչ թե որևէ օրինաչափությամբ։ Ամբողջությամբ վերցրած, նեոթոմիզմն իր վոլյունտարիստական ձգտումները դուգակցելով ճակատագրական ասոմվածային կանխորոշման և կրոնական այլ ատրիբուտների հետ, բացահայտ կերպով ծայրը ծայրին չի հասցնում։ Քիչ ջանք չի թափվում «ապացուցելու», թե կոմունիզմը ազատությունը ոչնչացնում է իր բոլոր արտահայտություններով ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքականության առաջարկում։

«Պրակտիկ տեսակետից,— գրում է Դեկլոն Պետերֆին,— նույնիսկ տնտեսական ազատության խոստումը կատարվում է պլանային էկոնոմիկայի ճանապարհով, այսինքն տնտեսական ազատության բացասման միջոցով»[5]։ Ընդ որում դա հայտարարվում է որպես դիալեկտիկական էթիկայի հակասության վառ ապացույց։ Մինչդեռ ըստ էության հենց պլանային էկոնոմիկան է հանդիսանում տնտեսական շահագործումից ազատ մնալու պայմաններից մեկը։ Տնտեսական ազատությունը նա հասկանում է որպես մասնավոր գործունեության ազատություն, որպես կապիտալիստական անարխիա, որը թագավորում է բուրժուական հասարակությունում։ Բայց ինչպես հայտնի է, մարքսիզմը երբեք չի խոստացել այդ տիպի «ազատություն», որը առանց այն էլ հատուկ է կապիտալիզմին և իր էությամբ խորթ է իսկական ազատությանը։ Ինչպես նշել են Մարքսը և Էնգելսը, կապիտալիզմի ժամանակ անհատի համար կյանքի

[5] „The philosophy of Communism", p. 235.

պայմանները ենթարկված են պատահականությունների խաղին, որը ծնվում է առանձին անհատների միջև եղած կոնկուրենցիայից ու պայքարից։

«Այդ պատճառով բուրժուազիայի իշխանության ժամանակ անհատները երևում են ավելի ազատ, քան նրանք եղել են նախկինում, քանի որ կյանքի պայմանները պատահական են նրանց համար, իսկ իրականում նրանք, ինչպես, ավելի քիչ ազատ են, քանի որ առավել ենթակա են իրերի իշխանությանը»,—գրում են Մարքսը և Էնգելսը[6]։

Կապիտալիզմի ապրանքա-դրամային կեղեքման պայմաններում անձի ազատության մասին ամեն մի դատողություն անմտություն է, քանի որ տնտեսական ստրկացումից ազատվելն է անհրաժեշտ նախապայման ամեն մի այլ ազատագրման, իսկական մարդկային գոյության համար, երբ մարդը դադարում է տարերային ուժերի խաղալիք լինելուց։

Նեոթոմիստները հայտարարում են, որ իրենք կողմնակից են ինչ որ գոյություն չունեցող իդեալական դեմոկրատիայի, որը ամեն ինչից բարձր է դասում առանձին անհատի շահերը։

Բայց ինչպես հայտնի է, դասակարգային հասարակությունում չի կարող լինել դեմոկրատիա ընդհանրապես, այլ գոյություն ունի միայն դեմոկրատիա որպես որոշ դասակարգի քաղաքական իշխանության ձև։ Նեոթոմիստների իդեալը, ըստ էության, հանդիսանում է բուրժուական դեմոկրատիան, որը ամրապնդում է կապիտալիստների դասակարգի իշխանությունը և վարձու աշխատանքի սիստեմը, այն դեմոկրատիան, որը «պետությունը դարձրել է մոնոպոլիստական գործերի կառավարման կոմիտե»։

Գիտականորեն հիմնավորված և գործնականորեն ապացուցված է այժմ այն փաստը, որ միայն պրոլետարիատի դիկտատուրան որպես նոր դեմոկրատիայի բարձրագույն ձև, առաջին անգամ է դեմոկրատական ազատությունները դարձնում աշխատավոր մասսաների սեփականություն։

Ճիշտ է, որպես պետական իշխանության ձև, պրոլետարիատի դիկտատուրան Լենինի արտահայտությամբ «...մի շարք բացառումներ է անում ճնշողների, շահագործողների, կապիտալիստների վերաբերմամբ»[8]։ Բայց ազատության սահմանափակումները կոմունիստական հասարակության առաջին փուլում անհրաժեշտ նախապայման են՝ նրա լրիվ ծաղկման համար՝ երկրորդ փուլում։ Ինչպես նշվում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագրում, շահագործողների դասակարգերի վերացման հետ պրոլետարիատի դիկտատուրան վերափոխվում է համաժողովրդական սոցիալիստական դեմոկրատիայի, ամբողջ ժողովրդի շահերի և կամքի արտահայտության օրգանի։ Այսպիսով, իրականություն է դառնում դեռևս «Կոմունիստական պարտիայի մանիֆեստում» Մարքսի և Էնգելսի ասածն այն մասին, որ դառնալով իշխող դասակարգ, պրոլետարիատը ոչնչացնում է դասակարգային անտագոնիզմը և դրանով իսկ իր դասակարգային իշխանությունը։

---

[6] К. Маркс, Ф. Энгельс, Соч., I изд., т. IV, стр. 67.

[7] Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիր, Հայպետհրատ, 1962, էջ 30—31։

[8] Վ. Ի. Լենին, Պետություն և ռևոլյուցիա, Երկեր, հ. 25, էջ 600։

* * *

Որպեսզի ժողովրդականություն վայելեն լայն մասսաների մեջ, կաթոլիկ տեսաբանները հանդես են դալիս «հակակապիտալիզմի քողով», իրենց ձևացնելով աշխատանքի շահերի պաշտպաններ։ Կաթոլիկական սոցիալական դոկտրինան հավակնություն ունի լինելու ինչ-որ «միջին» կամ «երրորդ» ուղի կապիտալիզմի և սոցիալիզմի երկու ծայրահեղությունների միջև։

Ըստ էության Վատիկանի ծառաները, որոնք մեծ կապիտալ ունեն և սերտ կապված են ԱՄՆ-ի մոնոպոլիստների հետ, սահմանափակվում են առանձին «չարաշահումների» քննադատությամբ, ձգտելով ստեղծել չեղոքության և օբյեկտիվության պատրանք։ Կաթոլիցիզմի տեսաբանները բացահայտորեն ընդունում են, որ կապիտալիստական սիստեմը ինքնաստինքյան արատավոր չէ, այլ միայն կարիք ունի մի քանի աղավաղումների վերացման։

«Մենք կարող ենք ընդունել,—գրում է Ռ. Վիլինոն,—որ կապիտալիզմի հասցեին արվող մեղադրանքները չափազանցված են և երբեմն նույնիսկ պատմականորեն ճիշտ չեն, հատկապես, երբ կապիտալիզմին մեղադրում են բոլոր քաղաքական և սոցիալական անկարգությունների մեջ, որոնք մոլեգնել են աշխարհում։ Այնուամենայնիվ ճիշտ է, որ որոշ դեպքերում ժամանակակից հասարակությունը անթույլատրելի ձևով չարաշահում է մասնավոր սեփականության իրավունքը»[9]։ Հասարակության դասակարգային բաժանումը կաթոլիցիզմի սոցիալական դոկտրինան համարում է հավերժ և մարդկային բնության օրենքներին համապատասխանող բնական անհրաժեշտություն։ «Մարդու պահանջմունքների և տաղանդների բազմապիսիությունը ծառայում է որպես տարբեր դասակարգերի բնական հիմք»[10],— գրում է Հռոմի սուրբ Թոմա Ակվինացու ակադեմիայի գլխավոր քարտուղար Չարլզ Բոյերը։ Կաթոլիկական սոցիոլոգները պնդում են, որ անհրաժեշտ է ձգտել ոչ թե դասակարգերի ոչնչացմանը, այլ նրանց միջև ներդաշնակ համագործակցությանը։ Կապիտալիստները չպետք է հանդես բերեն խստություն բանվորների հանդեպ, քանի որ աշխատավորության չափից ավելի շահագործումը ևս անարդարություն է, ինչպես և պրոլետարիատի դասակարգային պայքարը։ Այդպիսի հովվերգական դասակարգային խաղաղեցման հասնելու նպատակով, կաթոլիցիզմի սոցիալական դոկտրինան ուժեղ կերպով պրոպագանդում է «սեփականության դիֆուզիայի» և «ժողովրդական կապիտալիզմի մասին» բուրժուական սոցիոլոգների մոդայական գաղափարները։

Համառորեն խորհուրդ է տրվում ամենախիստ անհավասարության ոչընչացման նպատակով օժանդակելու մանր և միջին սեփականության տարածմանը։ Իր վերջին շրջաբերականում՝ «Մայր և դաստիարակ» («Mater et magistra») Հովհան XXIII-ը նորից կոչ է անում ցրել մասնավոր սեփականությունը սոցիալական բոլոր դասակարգերի միջև. հատկապես պրոպագանդվում է ակցիաները բանվորների միջև տարածելու գաղափարը։ Այդպիսի տարաշրջումը օժանդակ աղբյուր է ստեղծում ձեռնարկությունների եկամուտները մեծացնելու համար։ Դա միաժամանակ պատրանք է ստեղծում, թե իբր բանվորները ևս մասնակցում են կառավարմանը և ձեռնարկությունների շահույթների ստացմանը։

[9] „The philosophy of Communism". p. 28.
[10] Նույն տեղում, p. IX.

Բանվոր դասակարգի գիտակցությունը մթագնելու նպատակով կաթոլիցիզմը լայնորեն պրոպագանդայի է ենթարկում ամերիկյան իմպերիալիզմի ջատագովներից փոխառնված «մարդկային հարաբերությունների տեսությունը», որը կոչված է հոգեբանական մշակումների և արտաքուստ բարյացակամություն ցուցաբերելու միջոցով «աշխատավորին վերադարձնելու իր արժանապատվությունը»։

Սակայն կապիտալիստական հասարակությունում մարդկանց հարաբերությունները «մարդկային» դարձնելու բոլոր փորձերը չեն կարող լինել հումանիստական ձգտումների դրսևորում, եթե դրանք չեն շոշափում կապիտալիզմի տնտեսական հիմքերը։ Կղերական սոցիոլոգները հասարակության հումանիզացիայի հիմնական միջոցը համարում են սիրո զգացումների դաստիարակումը ճնշողների և ճնշվողների միջև՝ նրանց բարոյական ինքնակատարելագործման հիման վրա։ Հավասարությունը վերջ ի վերջո հանգեցվում է աստծո առաջ քրիստոնեական «հավասարության» ասույթին, որը դարերի ընթացքում չի խանգարել երկրային աղաղակող անհավասարությանը։ Իր բնույթով քրիստոնեությունը չի կարող հանդես գալ որպես իսկական հումանիզմի կրող, քանի որ նա լավագույն դեպքում առաջ բերելով կարեկցություն և ողորմածություն դեպի մարդը, իր աստվածային բանականությամբ նսեմացնում է, այլ ոչ թե բարձրացնում մարդուն։ Այդպիսին է նույնիսկ ժողովրդին կարեկցող քրիստոնեական առաջավոր տեսաբանների հումանիզմը։

Ի դեմս Վատիկանի ծառաների, մենք գործ ունենք խիստ ռեակցիոն տեսաբանների հետ, որոնք օժանդակում և ոգևորում են ժամանակակից աշխարհի ամենասև ուժերին։

Սև ֆաշիստավոր սոցիոլոգները, ամենուրեք աղավաղելով և կեղծելով մարքս-լենինյան տեսությունը, հերյուրանքներ են թափում սոցիալիստական լագերի երկրների հասցեին։ Անվանելով այդ ամենը «հակակոմունիզմի ծրագիր», նրանք ձգտում են մաքսիմալ ակտիվություն դրսևորել նաև գրականական ասպարեզում։ Այս նպատակով հրավիրվում են հատուկ սեմինարներ՝ նվիրված կոմունիզմի դեմ պայքարին և հակայական միջոցներ են վատնվում կաթոլիցիզմի սոցիալական դոկտրինայի ռեակցիոն դաղափարների պրոպագանդման համար։ Վատիկանի ակտիվ քաղաքական գործունեության մասին է վկայում այն փաստը, որ 1960 թվականի բարձր մակարդակի խորհրդակցության ձախողումից հետո, Վատիկանը մի շարք կարդինալներ գործուղեց էյզենհաուերին զեկուցելու իրենց տեսակետները՝ ստեղծված դրության վերաբերյալ, և ուսումնասիրելու այն պրոբլեմները, որոնք կանգնած են պրեզիդենտական ընտրությունների ճանապարհին։ Վատիկանը կոչ արեց շարունակել կոմունիստական վտանգի դեմ մղվող պայքարը, նրա մեջ ընդգրկելով Ատլանտյան բլոկի բոլոր երկրների քրիստոնյաներին։ Վատիկանի ակտիվ գինակիցներից մեկը՝ կարդինալ Պ. Ագաջանյանը, որը հայտնի է իր նզովքներով Սովետական Հայաստան վերադարձած հայերի նկատմամբ, ևս մեկնել էր Վաշինգտոն այդ բանակցություններին մասնակցելու համար։

Ինչպես ասվում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագրում, «Իմպերիալիզմի քաղաքական և գաղափարախոսական գինանոցում հարաճուն նշանակություն է ձեռք բերում կղերամտությունը։ Նա չի սահմանափակվում եկեղեցու և նրա ճյուղավորված ապարատի օգտագործումով։ Նա այժմ ունի իր բոլոր քաղաքական պարտիաները, որոնք կանգնած են իշխանու-

թյան գլուխ կապիտալիստական շատ երկրներում։ Ստեղծելով իր արհմիութենական, երիտասարդական, կանանց և այլ կազմակերպությունները, կղերականությունը պառակտում է բանվոր դասակարգի շարքերը, աշխատավորների շարքերը։ Մոնոպոլիստները առատաձեռն կերպով ֆինանսավորում են կղերական պարտիաներին ու կազմակերպություններին, որոնք շահագործում են աշխատավորների կրոնական զգացմունքները, նրանց սնոտիապաշտությունները և նախապաշարմունքները»[11]։

Այդ քրիստոնեական, դեմոկրատական, քրիստոնեական-սոցիալական և այլ պարտիաները, Դարրիել Ռեյի արտահայտությամբ, կոչված են «պաշտպանելու իրենց ընդհանուր ժառանգությունը՝ քրիստոնեական հումանիզմը»[12]։ Սակայն այդ պարտիաների պրակտիկ գործունեությունը, որը հիմնված է միլիտարիզմի և կղերականության սերտ դաշնակցության վրա (թեկուզ և կանցլեր Ադենաուերի քաղաքականության օրինակով) շատ ճիշտ կերպով բացահայտում է այդ տիպի «հումանիզմի» պատկերը։ Լի Սին Մանին և Ջան Կայ Շիին օգնելը, Պատրիս Լումումբայի չարանենգ սպանությունը խրախուսելը—սա է կաթոլիկական կենտրոնի «հումանիստական» գործունեության ոչ լրիվ պատկերը։

Մեր ժամանակի առավել մասսայական հումանիստական շարժումը՝ պայքարը խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության համար համախմբել է տարբեր ազգերի, կրոնական և քաղաքական տարբեր համոզմունքների միլիոնավոր պրոգրեսիվ մարդկանց։ Սակայն այս հարցում էլ, որտեղ լուծվում է ժամանակակից սերնդի ճակատագիրը, Վատիկանը քողարկվելով խաղաղասիրական ֆրազներով, շատ վատ դեր է խաղում։ Փաստորեն օրհնելով խաչակրաց արշավանքը կոմունիզմի դեմ, Վատիկանը դրա հետ մեկտեղ օգտագործում է մի շարք տեսական խորամանկություններ, որպեսզի ծածկի իր իսկական ձգտումները։

Սիրված սոփեստական տրյուկ է հանդիսանում դասակարգային խաղաղության նույնացումը ժողովուրդների միջև եղած խաղաղության հետ։ Խաղաղության պայմանը համարվում է «ներքին խաղաղությունը», որը տանում է դասակարգային համագործակցություն հաստատելուն։ Վերջին ժամանակներս ոչ անհայտ Գուստավ Վետտերը նույնիսկ ձգտում է ապացուցել, որ խաղաղ համագործակցության սկզբունքը իբր թե չի բխում լենինիզմից, որ սոցիալիստական երկրների գոյությունը ինքնին վտանգ է հանդիսանում խաղաղության համար[13]։

Կոմունիզմի դեմ հայտարարված տենդագին պայքարում կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների տեսաբանները հետին պլանի վրա դնելով գոյություն ունեցող երկու եկեղեցիների միջև ներքին հակասությունները, հարց են դնում քրիստոնեական տարբեր հոսանքների միասնական գործունեության մասին։ Այս միասնությունը հնարավոր է համարվում միայն կաթոլիկ եկեղեցու դե-

---

[11] Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը, էջ 63։

[12] Gabriel Ray, Humanism et Surhumanisme. Paris, Hachette, 1951, p. 249.

[13] Մանրամասն այդ մասին տե՛ս В. В. Дмитриев, По поводу философского опровержения концепции мирного сосуществования. „Вопросы философии", № 5, 1960 г. и А. М. Ковалев, Еще раз о ленинской концепции мирного сосуществования и её опровергателях", „Философские науки", № 3, 1960 г.

կավարությամբ։ Այսպես, օրինակ, կաթոլիկ եկեղեցու տեսաբան Վ. Ֆոն Լովենիկն ասում է. «Քրիստոնյաների միասնությունը կարող է լինել միայն կաթոլիկ եկեղեցու ներսում»[14]։

Հարց է բարձրացվում հայկական եկեղեցու (լուսավորչական) և կաթոլիցիզմի գաղափարական ջանքերի միասնությունն ապահովելու մասին։ Այսպես, օրինակ, 1959 թվականի փետրվարի 1-ին Հովհան XXIII-ը հայ հավատացյալների հետ ունեցած հանդիպման ժամանակ ասել է, թե «...չենք կրնար չմաղթել, որ հայ երկու զանգվածներուն միջև լուսավորչական, թե կաթոլիկե տեղի ունենայ մերձեցում մը, որ կարծենք ուրախութեան և օրհնութեան աղբյուր պիտի ըլլայ»[15]։

* * *

Կաթոլիկ քարոզիչները սոցիալիստական հումանիզմը մեղադրում են նրանում, որ այն կտրված է աստծուց և նրա գլխավոր նպատակն է «ստեղծել երկրային դրախտ մարդու համար»։

«Համընդհանուր հումանիզմի» գաղափարը դատարկ ֆրազ է, որը կոչված է աշխատավորների ուշադրությունը շեղել երկրային ծանր կեցությունից և նրանց հայացքն ուղղել այնկողմյան աշխարհը։ Կաթոլիկական այս դոկտրինան ընդունակ չէ փոխելու աշխատավոր մասսաների երկրային ծանր վիճակը։ Հատկանշական է, որ Վատիկանի գաղափարախոսները անարդարությունների և ժամանակակից կապիտալիստական աշխարհի արատների սանկցիան տեսնում են մարդու «բնական» և «հավերժ» էության մեջ։

Ըստ նրանց, մարդու էությունը այնպիսին է, որ երկրային բարիքների առատությունը չի կարող բավարարել նրա ցանկությունները և հագեցնել նրա կրքերը։ Նախանձը, խանդը, փառասիրությունը, իշխանության ձգտելու ծարավը—այդպիսին են մարդկային թուլությունները, որոնք ըստ Չարլզ Ռոյերի չեն կարող բավարարվել տնտեսական և ոչ մի ուտոպիայով[16]։

Հասարակությունը դիտելով որպես իրարից անկախ եսապաշտական «ես»-երի ընդհանրություն, կաթոլիկ տեսաբանները սոցիալիստական կարգերը մեղադրում են նրանում, որ մարդը վերջինիս համար իբր թե միջոց է, և ոչ թե նպատակ, որ սոցիալիզմը անհատի ճնշում է բերում։

Սակայն իրականությունը յուրաքանչյուր օր հարստանում է նոր փաստերով, որոնք ակնառու հերքում են մարքսիզմի թշնամիների չարամիտ զրպարտանքները։ Աշխատավորների հարաճուն պահանջմունքների բավարարումը, որը մեր արտադրության նպատակն է, ազգային ճնշման իսպառ վերացումը, պարտիայի և կառավարության միջոցառումների համաժողովրդական քննարկումները, ուշադրությունը մարդու և նրա աշխատանքի նկատմամբ, աշխատանքային օրվա անընդհատ կրճատումը, ժողովրդի կենսամակարդակի հարաճուն բարձրացումը—այս ամենը սոցիալիստական հումանիզմի դրսևորումներն են մեր երկրում։

Սոցիալիստական հումանիզմի գործոններից մեկը կնոջ և տղամարդու հավասարությունն է մեր հասարակության մեջ, որը կաթոլիկ տեսաբանների

---

[14] W. von Loevenich, Die moderne Katholizismus. Luther Verlag. Witten. Essen., 1956, p. 351).

[15] «Խազմավեպ», 1959, № 1, էջ 5։

[16] „The philosophy of Communism", p. IX.

կողմից ի միջի այլոց հասկացվում է իբրև «ամուսնուն բնականորեն ենթարկվելու» փոխարինում պետությանը անբնականորեն ենթարկվելով։ Այն ժամանակ, երբ քրիստոնեական հումանիզմը հանդում է բուրժուական ինդիվիդուալիզմի և եսապաշտության, որը իմպերիալիզմի էպոխայում վեր է ածվում բացահայտ մարդատյացության, սոցիալիստական հումանիզմը պրակտիկ հնարավորություններ է ընձեռում յուրաքանչյուր անհատի ամենաազատ զարգացման համար, մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման համար։

Կոմունիզմի ծավալուն կառուցումը անհնար է առանց բազմակողմանիորեն զարգացած, կրթված, բարոյական և ֆիզիկական կատարելության հասած անհատների։

Եսամոլությունից, փառասիրությունից և շահասիրությունից ազատ նոր սերնդի դաստիարակումը լավագույն հերքումն է մարդու այն «բնական էության», որի մասին հառաչում է Զ. Բոյերը։

Ը հակադրություն բուրժուական բարոյականության, կոմունիստական բարոյականությունը հաստատում է անձնական և հասարակական շահերի միասնությունը, առաջին պլանի վրա դնելով հասարակականը։ Անձնազոհությունը, կոլեկտիվիզմը, մարդասիրությունը վաղուց ի վեր դարձել են սովետական մարդու տարբերիչ հատկանիշը։ Սոցիալիստական հասարակության մեջ մարդը մարդուն ընկեր է, եղբայր։

Անձնականի նկատմամբ հասարակական շահերի գերադասումը բոլորովին էլ չի նշանակում, թե մարդը զոհ է դառնում հասարակությանն ու պետությանը, ինչպես պնդում են մարքսիզմի թշնամիները։ Արտադրության միջոցների նկատմամբ հանրային սեփականությունը և աշխատանքի հասարակական բնույթը առանձին անհատների պահանջմունքների բավարարումը հնարավոր են դարձնում միայն ամբողջ հասարակության ծաղկման պայմաններում։ Դրանումն է սոցիալիստական սիստեմի բուն էությունը։

Ինչպես նշվում է ՍՄԿՊ նոր Ծրագրում, պարտիան համաշխարհային պատմական նշանակություն ունեցող խնդիր է դնում՝ մեր երկրում ապահովել ամենաբարձր կենսամակարդակ՝ ցանկացած կապիտալիստական երկրի համեմատությամբ։

Վեհորեն բարձրացնելով մարդու արժանապատվությունը, կոմունիստական բարոյականությունը դրա հետ մեկտեղ չի ընդունում մարդու վերացական արժանիքներ։

Բարձր գիտակցական վերաբերմունքը հասարակության, աշխատանքի, ընկերների նկատմամբ, բարոյական մաքրությունը, կենցաղում, ընտանիքում, համերաշխությունը այլ ժողովուրդների հետ, ատելությունը շահագործողների, խաղաղության և առաջադիմության թշնամիների նկատմամբ այս բոլոր հատկությունները, որոնք ամրագրված են կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսում—հանդիսանում են անհատի արժեքի հիմնական չափանիշը նոր հասարակության մեջ։

Այդպիսին է կոմունիզմի գործուն հումանիզմը։ Մարքսիզմը անձի ազատագրումը անքակտելիորեն կապելով կապիտալիզմի վերացման և սոցիալիստական կարգերի կառուցման հետ, առաջին անգամ ռեալ հողի վրա է դրել մարդու իսկական ազատագրման պրոբլեմը։

Անձնականի նկատմամբ հասարակական շահերի գերադասումը բոլորովին էլ չի նշանակում թե մարդը զոհ է դառնում հասարակությանն ու պետությանը — ինչպես պնդում են մարքսիզմի թշնամիները։ Արտադրության միջոցների նկատմամբ հանրային սեփականությունը և աշխատանքի հասարակական բնույթը — առանձին անհատների պահանջմունքների բավարարումը հնարավոր է դարձնում միայն ամբողջ հասարակության ծաղկման պայմաններում։ Դրանումն է սոցիալիստական սիստեմի բուն էությունը։

Ինչպես նշվում է ՍՄԿՊ նոր Ծրագրում, պարտիան համաշխարհային պատմական նշանակություն ունեցող խնդիր է դնում՝ մեր երկրում ապահովել ամենաբարձր կենսամակարդակ՝ ցանկացած կապիտալիստական երկրի համեմատությամբ։

Վեհորեն բարձրացնելով մարդու արժանապատվությունը, կոմունիստական բարոյականությունը դրա հետ մեկտեղ չի ճանաչում մարդու վերացական արժանիքները։

Հասարակության, աշխատանքի ընկերների նկատմամբ, կենցաղային մաքրությունը, ընտանիքի նկատմամբ ցուցաբերվող բարձր գիտակցականությունը, համերաշխությունը այլ ժողովուրդների հետ, ատելությունը շահագործողների, խաղաղության և առաջադիմության թշնամիների նկատմամբ — այս բոլոր հատկությունները, որոնք ամրացված են կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսում — հանդիսանում են անհատի հիմնական չափանիշը նոր հասարակության մեջ։

Այդպիսին է կոմունիզմի իսկական հումանիզմը։ Մարքսիզմը անձի ազատագրումը անքակտելիորեն կապելով կապիտալիզմի վերացման սոցիալիստական կարգերի կառուցման հետ — առաջին անգամ է ռեալ հողի վրա դրել մարդու իսկական ազատագրման պրոբլեմը։

Հենվելով մարքսիստական-լենինյան ուսմունքի վրա, Սովետական Միությունը, Կոմունիստական պարտիան աշխարհին ցույց տվեցին նախկինում մոռացված և խավարի գրկում դեգերող միլիոնավոր մասսաների ազատագրման և արթնացման վառ օրինակ, մասսաների, որոնք այժմ կոչված են ստեղծագործական ակտիվ գործունեության, հաղորդակից են դարձված գիտության, կուլտուրայի և քաղաքակրթության գանձերին։

ՍՍՌՄ-ում կոմունիստական հասարակության կառուցման ռեալ հեռանկարները, որոնք ուրվագծված են ՍՄԿՊ XXII համագումարի կողմից հաստատված նոր Ծրագրում — կոմունիզմի կառուցման պլան է, որի իրականացմամբ մեր երկրում կստեղծվի իսկական հումանիստական հասարակություն, որի մասին դարերի ընթացքում երազել են մարդկության լավագույն մտածողները։